

No. 44951*

**Cyprus
and
Armenia**

Agreement between the Government of the Republic of Cyprus and the Government of the Republic of Armenia on co-operation in combating organized and other forms of crime. Nicosia, 23 November 2006

Entry into force: *27 February 2008 by notification, in accordance with article 14*

Authentic texts: *Armenian, English and Greek*

Registration with the Secretariat of the United Nations: *Cyprus, 23 May 2008*

**Chypre
et
Arménie**

Accord entre le Gouvernement de la République de Chypre et le Gouvernement de la République d'Arménie relatif à la coopération dans la lutte contre le crime organisé et d'autres formes de crimes. Nicosie, 23 novembre 2006

Entrée en vigueur : *27 février 2008 par notification, conformément à l'article 14*

Textes authentiques : *arménien, anglais et grec*

Enregistrement auprès du Secrétariat des Nations Unies : *Chypre, 23 mai 2008*

* *The texts reproduced below are the original texts of the agreement as submitted. For ease of reference, they were sequentially paginated. Their final UNTS version is not yet available.*

Les textes reproduit ci-dessous sont les textes authentiques de l'accord tel que soumises pour l'enregistrement. Pour référence, ils ont été présentés sous forme de la pagination consécutive. Leur version finale RTNU n'est pas encore disponible.

[ARMENIAN TEXT – TEXTE ARMÉNIEN]

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Կիպրոսի Հանրապետության Կառավարության և Հայաստանի
Հանրապետության Կառավարության միջև՝ կազմակերպված և
հանցագործությունների այլ տեսակների դեմ պայքարում
համագործակցության մասին

Կիպրոսի Հանրապետության Կառավարությունը և Հայաստանի
Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,
ձգտելով ջանքեր գործադրել՝ նպաստելու համար իրենց նրկկողմ
հարաբերությունների հետագա զարգացմանը,

խորապես մտահոգվելով հանցագործության անդրազգային տարածմամբ,
գիտակցելով նրկկողմ համագործակցության մեծ նշանակությունը
կազմակերպված հանցավորության և հանցագործությունների այլ տեսակների
դեմ պայքարում և դրանց արդյունավետ կանխման գործում,

նպատակ ունենալով խորացնել և ներդաշնակեցնել իրենց համատեղ
ջանքերը հանցագործությունների դեմ պայքարում,

ընդունելով այս համագործակցության փոխշահավետությունը նրկու
Պայմանավորվող կողմերի համար,

հաշվի առնելով համապատասխան միջազգային պայմանագրերը, որոնց
կողմեր են իրենք հանդիսանում,

հարգելով իրենց ազգային օրենսդրությունը և հավասարության ու
փոխադարձության սկզբունքները,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

1. Հաշվի առնելով իրենց ազգային օրենսդրությունը և դրան
համապատասխան, ինչպես նաև համաձայն սույն Համաձայնագրի
դրույթներին՝ Պայմանավորվող կողմերը կհամագործակցեն կազմակերպված
հանցավորության և հանցագործությունների այլ տեսակների դեմ պայքարի,
բացառապես, կանխման և հետապնդման գործում, ինչպիսիք են.

1) անձանց կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության դեմ
հանցագործությունները,

2) առաքելիչական գործունեության հետ կապված
հանցագործությունները,

3) թմրամիջոցների, հոգեմեդրամոն նյութերի և դրանց բաղադրիչների
ապօրինի արտադրությունը, մշակման և ներմուծումը, ստացումը,
արտահանումը, ներմուծումը, տարանցմամբ փոխադրումը կամ ապօրինի
շրջանառությունը,

4) հասարակական կարգի և հասարակական անվտանգության դեմ
հանցագործությունները,

5) միջուկային և ռադիոակտիվ նյութերի գողայությունը, դրանց փոխադրումը, ապօրինի առևտուրը, դրանց ոչ ճիշտ օգտագործումը կամ ոչ ճիշտ օգտագործմամբ վնաս հասցնելու վտանգը,

6) հանցագործությունները, որոնք ընդգրկում են առևանգումը, պատանդ վերցնելը կամ անօրինական կալանքի տակ պահելը,

7) մարդկանց անօրինական տնդափոխումը,

8) հրազենի, ռազմամթերքի և պայթուցիկ նյութերի ապօրինի արտադրությունը, տիրապետումը և տնդափոխումը,

9) տնտեսական խարդախությունը, փողի լվացումը և կռաուպցիան,

10) թղթադրամների, մետաղադրամների, վճարման այլ միջոցների և արժեթղթերի կեղծումը և դրանց շրջանառությունը,

11) մշակութային առարկաների, հատկապես հնատճ իրերի և արվեստի գործերի գողությունն ու անօրինական առևտուրը և շրջանառությունը,

12) սառնամանի անօրինական հատումը և տնդափոխությունը,

13) անձնագրերի, այլ ճամփորդական փաստաթղթերի, ինքնությունը հաստատող վկայականների և այլ փաստաթղթերի կեղծումը, դրանց օգտագործումն ու շրջանառությունը,

14) մեքենաների գողությունը, վարորդական իրավունքի վկայականների և մեքենայի այլ փաստաթղթերի կեղծումը,

15) որևէ առարկայի գողությունը, ապօրինի փոխադրումը և մաքսանենգությունը,

16) անձանց սեռական շահագործումը,

17) երեխաներ ընդգրկող պոռնոգրաֆիկ նյութերի արտադրությունը և շրջանառությունը,

18) ծովահենությունը և օդահենությունը,

19) մտավոր սեփականության դեմ կատարված հանցագործությունները,

20) համակարգչային հանցագործությունները:

2. Պայմանավորվող կողմերը կհամագործակցեն մասնավորապես այն դեպքերում, երբ հանցագործությունները կամ դրանց նախապատրաստվելը իրականացվում են Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում, և ստացված տվյալները կառված են մյուս Պայմանավորվող կողմի տարածքի հետ:

Հոդված 2

1. Սույն Համաձայնագրի դրույթների իրականացման համար Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները, Լիպրոսի Հանրապետության կողմից՝

- 1) արդարադատության և հասարակական կարգի նախարարությունը,
- 2) ոստիկանության շտաբը,
- 3) ներքին գործերի նախարարությունը,
- 4) մաքսատուրքերի և ակցիզային հարկերի, դեպարտամենտը,

Հայաստանի Հանրապետության կողմից՝

- 1) ոստիկանությունը,
- 2) ազգային անվտանգության ծառայությունը,
- 3) գլխավոր դատախազությունը,

4) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն, պետք է իրենց լիազորությունների և իրավասության շրջանակներում ուղղակիորեն համագործակցեն միայնաց հետ և կարող են Համաձայնագրով սահմանել իրենց համագործակցության որոշակի ոլորտները և հաղորդակցման ձևերը:

2. Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կիրականացվի շահագրգիռ կողմի իրավասու մարմինների կողմից ներկայացված՝ համագործակցելու վերաբերյալ դիմումների հիման վրա: Համագործակցության դիմումը պետք է ներկայացվի գրավոր: Անհետաձգելի դեպքերում դիմումը կարող է կատարվել բանավոր, բայց այն նրեք օրվա ընթացքում պետք է հաստատել գրավոր՝ օգտագործելով, *inter alia*, կապի տեխնիկական միջոցները:

3. Իրենց իրավասության շրջանակներում համապատասխան մարմինները կարող են փոխանակել կապի սպաներ և համաձայնվել անմիջական համագործակցության որոշակի ուղիների և մեթոդների վերաբերյալ:

4. Պայմանավորվող կողմերի համապատասխան մարմինները այցի նախատեսված ժամկետից ոչ ուշ, քան երկու շաբաթ առաջ պետք է միայնաց ներկայացնեն այն անձանց անունները, որոնք կմասնակցեն փորձագետների փոխանակմանը:

5. Այլ համաձայնության բացակայության դեպքում համագործակցող մարմինների հաղորդակցման և տեղեկատվության փոխանակման համար կօգտագործվի անգլերենը:

6. Որևէ մարմնի իրավասության կամ անվան ցանկացած փոփոխության դեպքում Պայմանավորվող կողմերը պետք է դրա մասին միայնաց տեղեկացնեն դիվանագիտական ուղիներով:

Հոդված 3

1. Հանցագործության բացահայտման և կանխման գործում համագործակցության դեպքում Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները.

1) միայնաց կտեղեկացնեն հանցագործության մեջ ընդգրկված անձանց տվյալների, հանցագործների միջև կապերի, հանցավոր խմբերի կառուցվածքի, առանձին հանցագործի և խմբի դերի, գործերի տվյալների (հատկապես հանցագործության ժամանակի, վայրի և մեթոդի), հարձակման ենթարկված շինությունների, յախտված օբյեկտի, ձեռնարկվող միջոցների մասին, ինչպես նաև որևէ այլ մանրամասնի մասին, որը անհրաժեշտ է նման հանցագործությունների կանխման և յապիանման համար,

2) դիմումի դեպքում կձեռնարկեն հայցվող Պայմանավորվող կողմի ազգային օրենսդրությամբ թույլատրված օպերատիվ և այլ միջոցներ,

3) կփոխանակեն տվյալներ և փորձ հանցագործության կատարման մեթոդների և նոր տեսակների վերաբերյալ,

4) կփոխանակեն իրենց քրեական և քրեագիտական ուսումնասիրությունների արդյունքները,

5) միմյանց կտեղեկացնեն քննություն կատարելու տեխնիկայի և աշխատանքային մեթոդների ու սարքավորումների կիրառման վերաբերյալ իրենց փորձի մասին դրանք կատարելագործելու նպատակով,

6) դիմումի դեպքում միմյանց կտրամադրեն տեղեկատվություն հանցավոր գործողություններից բխող կամ հանցագործությունների կատարման համար օգտագործվող առարկաների և դրանց նմուշների վերաբերյալ,

7) կփոխանակեն քրեական ոլորտի մասնագետներ՝ համատեղ կամ փոխադարձ ուսուցման և վերագատրաստման համար բարձր մակարդակով փորձաքննություն անցկացնելու և քրեական տեխնիկայի ժամանակակից ձեռքբերումների, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարում օգտագործվող սարքավորումների և մեթոդների փոխադարձ ուսումնասիրման համար,

8) անհրաժեշտության դեպքում կհանդիպեն՝ համակարգված միջոցները նախապատրաստելու և խթանելու համար խորհրդակցելու նպատակով,

9) կհամագործակցեն վերահսկվող մատակարարումները հեշտացնելու նպատակով՝ ներգրավված անձանց ձերբակալումը հնարավոր դարձնելու համար՝ պայմանով, որ անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրվի հայցվող գործողության իրականացումից առնվազն 48 ժամ առաջ:

2. Բացի դրանից՝ համագործակցությունը Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների միջև կընդգրկի.

1) տեղեկատվության փոխանակումը սույն Համաձայնագրում նշված հանցավոր գործողությունների վերաբերող օրենսդրական դրույթների մասին,

2) տեղեկատվության փոխանակումը հանցավոր գործողություններից ստացված եկամուտների վերաբերյալ,

3) տեղեկատվության փոխանակումը ուսումնասիրությունների և այլ գործողությունների վերաբերյալ՝ կապված անհայտ կորած կամ հետախուզվող անձանց հետ,

4) օտարերկրացիների և միգրացիայի վերաբերյալ փորձի և օրենսդրական դրույթների փոխանակումը, ինչպես նաև ճամփորդական փաստաթղթերի, վիզաների և կնիքների նմուշների փոխանակումը,

5) տեղեկատվության փոխանակումը անօրինական միգրացիայի, միգրանտների անօրինական փոխադրումներ կազմակերպողների և օժանդակողների վերաբերյալ:

Հոդված 4

Ահաբեկչական գործողությունների հետ կապված հանցագործությունների կանխման և հանցագործությունների դեմ պայքարի համար Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները

1) կփոխանակեն տեղեկատվություն և տվյալներ ահաբեկչական գործունեության հետ կապված՝ պլանավորված կամ կատարված հանցագործությունների վերաբերյալ, այն անձանց մասին տեղեկատվություն և տվյալներ, ովքեր մասնակցում են այդ հանցագործություններին. դրանց կատարման մեթոդների և օգտագործվող տեխնիկական սարքավորումների վերաբերյալ.

2) կփոխանակեն տեղեկատվություն և տվյալներ ահաբեկչական խմբերի և դրանց անդամների վերաբերյալ, ովքեր պլանավորում, կատարում կամ